## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի**
**Մեղրի համայնք, Զորավար Անդրանիկ 2**
**հեռ. (0286)4 34 23 էլ-հասցե՝ meghri.syuniq@mta.gov.am**

Թիվ 265
*29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան,

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 27-ը դեկտեմբերի 2016 թվականի N52-Ա, N53-Ա, N54-Ա, N55-Ն, N56-Ն,N57-Ա, N58-Ա,N59-Ա,N60-Ն, N61-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

*Կատ.՝ Լ. Մեժլումյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

***27 դեկտեմբերի 2016 թվական N52 - Ա***

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝*

***որոշում է՝***

*Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N6 արտահերթ նիստի օրակարգը՝*

*1.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի «Մեղրու համայնքային կոմունալ տնտեսություն»» ՀՈԱԿ-ը վերանվանելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:*

*2.«Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին:*

*3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի փողոցների, գերեզմանատների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանմաքրման, աղբահանության, բարեկարգման և պահպանության ծառայությունների մատուցման մասին:*

*4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու և գանձելու մասին:*

*5. Հողի հարկի և գույքահարկի արտոնություններ սահմանելու մասին:*

*6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու մասին:*

*7.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող «ԲԷՑ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:*

*8.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 26-ի « ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն, ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 29-ի « ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի 2016 թվականի*

բյուջեն հաստատելու մասին » ԹԻՎ 57-Ն և Կուրիսի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀՀ Սյունիքի մարզի Կուրիս գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*27 դեկտեմբերի 2016 թվական N53 - Ա*

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ « ՄԵՂՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ »» ՀՈԱԿ-Ը ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 26-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին*

***որոշում է՝***

*1.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի «Մեղրու համայնքային կոմունալ տնտեսություն»» ՀՈԱԿ-ը վերանվանել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:*

*2.Հաստատել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 1-ի:*

*3.Հաստատել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:*

*4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:*

| Կողմ (10) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | |
| ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ | | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՍ | | |
| ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ*

*2016թ. դեկտեմբերի 27*
*ք. Մեղրի*

Հավելված
<< Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 27-ի
N53-Ա որոշման

# «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ,ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 82 մարդ

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| Պաշտոնների անվանումը | Հաստիքային միավորների թիվը | Դրույքաչափը | Լրացուցիչ ամս. աշխատավարձ | Ամսական աշխատավարձ | ընդամենը տարեկան աշխ. ֆոնդը |
|---|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 138000 | | 138000 | 1656000 |
| Տեղակալ | 2 | 137000 | | 274000 | 3288000 |
| Ճարտարագետ | 1 | 135000 | | 135000 | 1620000 |
| Գլխ.հաշվապահ | 1 | 100000 | | 100000 | 1200000 |
| Հաշվապահ | 1 | 95000 | | 95000 | 1140000 |
| Գործավար | 1 | 77903 | | 77903 | 934836 |
| Օպերատոր | 1 | 77903 | | 77903 | 934836 |
| Հսկիչ | 5 | 77903 | | 389515 | 4674180 |
| Վարորդ | 10 | 135000 | 540000 | 1350000 | 22680000 |
| Բանվոր | 32 | 135000 | 612500 | 4320000 | 59190000 |
| Մեխանիզատոր | 2 | 135000 | 130000 | 270000 | 4800000 |
| Աշխ.ղեկ | 1 | 135000 | 58000 | 135000 | 2316000 |
| էլեկտրիկ-փականագործ | 2 | 120000 | | 240000 | 2880000 |
| էլեկտրիկ | 1 | 135000 | 57000 | 135000 | 2304000 |
| Հավաքարար | 14 | 85000 | 166000 | 1190000 | 16272000 |
| Մեխանիկ-փականագործ | 1 | 135000 | | 135000 | 1620000 |
| Մեխանիկ | 1 | 135000 | | 135000 | 1620000 |
| Գյուղատնտես | 1 | 135000 | | 135000 | 1620000 |
| Պահակ | 3 | 77903 | | 233709 | 2804508 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 82 | | 1563500 | 9566030 | 133554360 |

Համայնքի ղեկավար՝ Մ.Զաքարյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 27-ի 53-Ա որոշմամբ

# <<ՄԵՂՐԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/նոր խմբագրությամբ/

ք.Մեղրի
2016թ.

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի բազմաբնակավայր համայնքի քաղաքային տնտեսությունն սպասարկելու նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքային համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարը:

Կազմակերպությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքի ղեկավարի 29.11.2012 թվականի թիվ 156-Ա և Մեղրիի քաղաքային համայնքի ավագանու 30.11.2012 թվականի թիվ 43-Ա որոշումների համաձայն:

<<Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխվել է համաձայն Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 53-Ա որոշման, և հանդիսանում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի <<Մեղրու համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի /պետական գրանցման /հաշվառման/ թիվ 79.215.745538 վկայական N 03 Ա 895538, գրանցման ամսաթիվ 17.12.2012թ./ իրավահաջորդը:

2. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> (այսուհետ՝Օրենք) Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների և իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) համաձայն:

3. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

4. Կազմակերպությունը ձեռք է բերում և իրականացնում Կանոնադրությամբ ամրագրված գործառույթներ, ստանձնում է անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

6.Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, ք.Մեղրի , Զորավար Անդրանիկ փողոց, թիվ 2 շենք:

7. Կազմակերպության անվանումն է՝

«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր ևայլ անհատականացման միջոցներ::

9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

11. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:

12. Կազմակերպությունն իր կանոնադրական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք է բերում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

13.Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

14. Կազմակերպության գործունեության նպատակն է Մեղրի բազմաբնակավայր համայնքի վարչական տարածքի սահմաններում համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման, կանաչապատման և բնության ու շրջակա բնական միջավայրի պահպանության, համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների արտաքին լուսավորության, համայնքի գերեզմանատների գործունեության կազմակերպման և դրանց պահպանման, համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներից աղբահանության և սանիտարական մաքրման, համայնքի սեփականություն հանդիսացող բնակ-կոմունալ տնտեսության, համայնքի տարածքում տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտներում աշխատանքների իրականացումը:

15. Կազմակերպության գործունեության առարկան է՝

1. համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման, կանաչապատման և բնության ու շրջակա բնական միջավայրի պահպանության ոլորտում՝

ա) համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման և կանաչապատման ընթացիկ աշխատանքային ծրագրերի մշակում.

բ) համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների սպասարկում և վերանորոգում.

գ) կանաչ տարածքների՝ համայնքի կանաչ պաշտպանիչ գոտու, այգիների, պուրակների, սիզամարգերի, ծաղկանոցների և այլնի սպասարկում և վերանորոգում.

դ) նոր կանաչ տարածքների հիմնում.

ե) ծառերի սեզոնային էտում.

զ) հուշարձանների, պատմամշակութային արժեքների տարածքների բարեկարգում.

է) բնակչության մասսայական հանգստի վայրերի բարեկարգում,

ը) արտաքին բարեկարգման օբյեկտների գույքագրում, ընթացիկ սպասարկում և վերանորոգում.

թ) արտաքին բարեկարգման նոր օբյեկտների տեղադրում.

ժ) ամանորյա տոնածառի տեղադրում.

ի) համայնքային ծրագրերով իրականացված շինարարական կամ այլ աշխատանքների ընթացքում խախտված բարեկարգության վերականգնում.
լ) ոռոգման և այլ կառուցվածքների շահագործում և վերանորոգում.
խ) ոլորտի վերաբերյալ տեղեկատվաքարոզչական աշխատանքների իրականացում.

2. համայնքի սեփականություն հանդիսացող բնակ-կոմունալ տնտեսության ոլորտում՝
ա) բնակ-կոմունալ տնտեսության գծով աշխատանքային ծրագրերի մշակում.
բ) բնակ-կոմունալ տնտեսության օբյեկտների ընթացիկ սպասարկում և վերանորոգում.
գ) համայնքի վարչական տարածքի սահմաններում գտնվող բնակ-կոմունալ տնտեսության օբյերկտների գույքագրում, տիրազուրկ գույքի բացահայտում.
դ) շենքերի և շինությունների ճակատների բարեկարգում.
ե) ոլորտի վերաբերյալ տեղեկատվաքարոզչական աշխատանքների իրականացում.

3.համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում՝
ա) համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ընթացիկ աշխատանքային ծրագրերի մշակում.
բ) համայնքի սեփականություն հանդիսացող փողոցերի, հրապարակների, կանաչ տարածքների, այգիների և այլ տարածքների սանիտարական մաքրում,
գ) աղբահանություն՝ այդ թվում տարերային աղբավայրերից.
դ) աղբի հավաքման վայրերի կազմակերպում.
ե) աղբամանների սպասարկում և վերանորոգում.
զ) համայնքային աղբավայրի սպասարկում.
է) համայնքի սեփականություն հանդիսացող փողոցերի, հրապարակների և այլ տարածքների ձյան մաքրում.
ը) աղբահանության վճարի հավաքագրում.
թ) ոլորտի վերաբերյալ տեղեկատվաքարոզչական աշխատանքների իրականացում.
4. համայնքի տարածքում տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում՝
ա) տրանսպորտային ենթակառուցվածքների գծով ընթացիկ աշխատանքային ծրագրերի մշակում.
բ)համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների ընթացիկ սպասարկում և վերանորոգում.
գ)ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղակայում, ընթացիկ սպասարկում և վերանորոգում.
դ) ճանապարհների անձրևաջրատար ցանցերի ընթացիկ սպասարկում և վերանորոգում.

5. համայնքի գերեզմանատների գործունեության կազմակերպման և դրանց պահպանման ոլորտում՝

ա) քաղաքային գերեզմանատան սպասարկում, բարեկարգում և վերանորոգում.
բ) հուղարկավորությունների կազմակերպում (Համայնքի ղեկավարի որոշման հիման վրա).
6. համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների արտաքին լուսավորության ոլորտում՝
ա) արտաքին լուսավորության գծով ընթացիկ աշխատանքային ծրագրերի մշակում.
բ)փողոցային լուսավորման էլեկտրական ցանցերի տեխնիկական սպասարկում և վերանորոգում, երկարացում.
գ)ճարտարապետական և գովազդային լուսավորության տեղադրում, սպասարկում և

16. Հիմնադրի որոշմամբ՝ Կազմակերպությունն իրականացնում է Կանոնադրության 14 կետում նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ և օրենսդրությանը չհակասող այլ գործունեություն:

17. Կազմակերպությունը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1)Ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգում, կանաչապատում,

2)Ոչ կենցաղային, շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքում, փոխադրում,

3)Ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող շենք-շինությունների կապիտալ վերանորոգում, բարեկարգում:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, նրա Լիազորած մարմինը (Այսուհետ՝ Համայնքի ղեկավար), Գործադիր մարմինը (այսուհետ՝Կազմակերպության տնօրեն):

19. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

20. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության ստեղծումը.

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

Սույն հոդվածի 20-րդ կետի «բ», «գ», «դ», «ե», «զ» և «է» ենթակետերով նախատեսված իր լիազորությունները Հիմնադիրը վերապահում է Համայնքի ավագանուն :

21.Համայնքի ղեկավարն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

22. Համայնքի ղեկավարը՝

ա) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ)կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ)լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

ե)վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության

նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը)Օրենքով, Հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

23. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ Կազմակերպության տնօրենը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) Համայնքի ղեկավարը ՝ Օրենքին համաձայն:

Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի որոշումներով, Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի որոշումների, Կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

24. Կազմակերպության տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են Կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված մարմնի հետ, Կազմակերպության տնօրենի աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ սույն օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

25. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, համայնքին և (կամ) պետությանը պատճառված վնասի համար: Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից Կազմակերպությանը, համայնքին և (կամ) պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով Կազմակերպությանը, համայնքին և (կամ)պետությանը պատճառված վնասի համար Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցրած պաշտոնատար անձը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

26. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

27. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում Համայնքի ղեկավարի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

28.Կազմակերպության տնօրենը՝

ա)առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ)օրենսդրությամբ, Հիմնադրի և Համայնքի ղեկավարի որոշումներով և Կազմակերպության Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.



դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

զ) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու աշխատակիցների իրավասությունները.

է)օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ը) իրականացնում է օրենսդրությամբ չհակասող այլ լիազորություններ:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

29.Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

Հիմնադրման ժամանակ Կազմակերպությանը Հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է Կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ:

30.Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր Կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

31.Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ Հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

32.Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

33.Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

34. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

35.Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման կամ վարձակալության:

36.Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Հիմնադրի սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:

37.Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

38.Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

39. Կազմակերպության ֆինանսավորման աղբյուրներն են

ա) Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները.



---

բ)իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների տրամադրած դրամաշնորհները:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

40. Խոշոր գործարքները կատարվում են Լիազորված մարմնի համաձայնությամբ:

41.Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը, ինչպես նաև օրենքով նախատեսված պետական կառավարման մարմինները: Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպությունը պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

42.Կազմակերպությունն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելուն:

43. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է հետևյալ նպատակներով՝

ա) հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով Կազմակերպության նյութատեխնիկական համալրում,

բ)Կազմակերպության աշխատանքային գործունեությունն ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում,

գ) Կազմակերպության աշխատակիցների պարգևատրումներ և հավելավճարներ,

դ) Կազմակերպության աշխատակիցների որակավորման բարձրացում:

44. Կազմակերպության շահույթն օգտագործվում է Համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված կարգով:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

45. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս համայնքային մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

46. Կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

47. Կազմակերպությունը կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

48. Կազմակերպությունը կարող է լուծարվել Հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

49. Կազմակերպությունը կարող է դատական կարգով լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

50. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

51. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2016 թվական N54- Ա

«ԱԳԱՐԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 25-րդ հոդվածներով, առաջնորդվելով ՀՈԱԿ-ի կանոնադրությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Լուծարել «Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն)՝առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

2.Հաստատել լուծարման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3.Հաստատել լուծարման հետևյալ կարգը և պայմանները՝

1)Լուծարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սահմանված կարգով,

2)պարտատերերի պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանել երկու ամիս,

3)պարտատերերը պահանջ կարող են ներկայացնել գրավոր ձևակերպված կազմակերպության իրավաբանական հասցե առաքված գրությամբ,

4) Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել կազմակերպության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքային բյուջե:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27 ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ավագանու 2016 թ.
դեկտեմբերի 27-ի N54-Ա որոշման

# ԿԱԶՄ
# «ԱԳԱՐԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Սոսիկ Սարգսյան-«Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Անդամներ՝

Անահիտ Սամվելյան- «Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ

Միեր Ղազարյան– Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի պետ

Նելլի Մելքումյան – Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի առաջատար մասնագետ

Մարգարիտա Թաթևոսյան- Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2016 թվական N55 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի կանաչապատման, բարեկարգման և սանմաքրման աշխատանքները իրականացնելու համար համապատասխան մարդկային ռեսուսներ և տեխնիկական բազա ունեցող միակ կազմակերպությունը «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն է, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի փողոցների, պուրակների, գերեզմանատների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանմաքրման, աղբահանության, բարեկարգման և պահպանության ծառայությունների մատուցումը իրականացնել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի փողոցների, գերեզմանատների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանմաքրման, աղբահանության, բարեկարգման և պահպանության ծառայությունների մատուցման մասին» թիվ 74-Ն որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2016 թվական N56-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 19-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը և այդ վճարի գանձումը համայնքի բյուջե վերապահել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Ոչ կենցաղային աղբի աղբահանության վճարի գանձումը յուրաքանչյուր կազմակերպության մասով հաշվարկելու և գանձելու համար հաշվի առնել համայնքի տարածքում գտնվող անշարժ գույքի նպատակային նշանակությունը և ըստ նպատակային նշանակության մակերեսից միջինացված արտադրվող աղբի ծավալը՝

1)մթերային խանութների ( այդ թվում շուկաների), հանրային սննդի և այլ ծառայությունների մասով միջինացված յուրաքանչյուր մեկ քառ. մետրից ամսեկան արտադրվում է 0,04խմ աղբ,

2)հյուրանոցների, այլ հասարակական օբյեկտների, արտադրական, արդյունաբերական, գրասենյակային տարածքների և ոչ մթերային խանութների մասով միջինացված յուրաքանչյուր մեկ քառ. մետրից ամսական արտադրվում է 0,02 խմ աղբ,

3)կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական օբյեկտների մասով՝ միջինացված յուրաքանչյուր մեկ քառ. մետրից ամսական արտադրվում է 0,001 խմ աղբ:

3.Յուրաքանչյուր ամիս համայնքի ղեկավարին ներկայացնել տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:

4.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքում

աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու և գանձելու մասին » N75-Ն որոշումը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող փասներորդ օրը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27

ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2016 թվական N57 –Ա

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 22.06.2012թ. N822-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Մեղրի քաղաքի Ջ. Անդրանիկի 7 հասցեում գտնվող շենքը 2015 թվականի հունիսի 13-ին հրդեհվելուց հետո բնակիչները փարահանվել և անհատույց բնակվում են Արմեն Կառլենի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող հյուրանոցի շենքում, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

ՀՀ Երևան քաղաքի բնակիչ Արմեն Կառլենի Միրզոյանին ք. Մեղրի Ջ. Անդրանիկի 5 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /հասարակական նշանակության շինություն՝ ծածկագիր՝ 09-005-064-001-002 և հողամաս՝ ծածկագիր՝ 09-005-064-001/ համար տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն՝ 157987 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, ազատելով 2016 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ առկա գույքահարկի ընթացիկ տարվա հարկի՝ 144139 ՀՀ դրամ, տույժի՝ 5837 ՀՀ դրամ, հողի հարկի պարտքի՝ 7052 ՀՀ դրամ, տույժի՝ 952 ՀՀ դրամ վճարումից:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2016 թվական N58 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող 2008 թվականի արտադրության VAZ 21214-130-20 մակնիշի 058 LL 70 պետ. համարանիշի ավտոմեքենան օտարել դասական բաց աճուրդով՝ մեկնարկային գին սահմանելով 1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (ըստ « ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2016 թվականին տրված ավտոմեքենայի շուկայական գնահատման թիվ ՇԳՀ/06/101 հաշվետվության):

2.Առաջարկել համայնքի ղեկավարին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել աճուրդը:

Կողմ (10) — Դեմ(0) — Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27
ք. Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 դեկտեմբերի 2016 թվական N59 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԲԷՑ» ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի №30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №1918-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի անդամների 19.12.2013թ. №115 դրական եզրակացությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում (Լեհվազ գյուղի տարածք) գտնվող, «ԲԷՑ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, 09-037-0204-0089 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական վարելահող նշանակության 0,04հա հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «էներգետիկայի հողեր» գործառնական նշանակությամբ՝ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի /հենասյուների/ կառուցման և սպասարկման համար:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2016 թվական N60 –Ն

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2-Ն, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 57-Ն ԵՎ ԿՈՒՐԻՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 26-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները,

1)Որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում (համայնքի բյուջեի եկամուտները՝ ըստ առանձին եկամտատեսակների) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 1-ի:

2)Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 2-ի:

3)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 3-ի:

4)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 4-ի:

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2016 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ՀՀ համայնքի պահուստային ֆոնդ (11.01.02.51) «Պահուստային միջոցներ»(4891) հոդվածից 18 300 000 (տասնութ միլիոն երեք հարյուր

հազար) դրամ հատկացնել «Ընթացիկ դրամաշնորհներ համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (4637) հոդվածին՝ Մեղրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ընթացիկ ծախսերը ֆինանսավորելու համար և 600 000 (վեց հարյուր հազար) դրամ հատկացնել «Այլ նպաստներ բյուջեից» (4729) հոդվածին:

2.Ագարակ քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները,

1) Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 5-ի:

2)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 6-ի:

3)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 7-ի:

3.Կուրիսի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀՀ Սյունիքի մարզի Կուրիսի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշումների մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 8-ի:

2)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 9-ի:

3)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 10-ի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27
ք. Մեղրի

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27 դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

| Տողի NN | եկամտատեսակները | Հոդվածի ամար | Տարեկանճշտվածպլան Ընդամենը (ս.8+ս.9) | վարչականբյուջե | այդթվում Ֆոնդայինբյուջե |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 7 | 8 | 9 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդթվում՝ | | 0,00 | 0,00 | |
| 1100 | 1.ՀԱՐԿԵՐԵՎՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդթվում՝ | 7100 | 4 229 000,00 | 4 229 000,00 | X |
| 1110 | 1.1 Գույքայինհարկերանշարժգույքից (տող 1111 + տող 1112) այդթվում՝ | 7131 | 760 000,00 | 760 000,00 | X |
| 1111 | Գույքահարկհամայնքներիվարչականտարածքներումգտնվողշենքերիևշինություններիհամար | | 940 000,00 | 940 000,00 | X |
| 1112 | Հողիհարկհամայնքներիվարչականտարածքներումգտնվողհողիհամար | | -180 000,00 | -180 000,00 | X |
| 1120 | 1.2 Գույքայինհարկերայլգույքիցայդթվում՝ | 7136 | 3 200 000,00 | 3 200 000,00 | X |
| 1121 | Գույքահարկփոխադրամիջոցներիհամար | | 3 200 000,00 | 3 200 000,00 | X |
| 1130 | 1.3 Ապրանքներիօգտագործմանկամգործունեությանիրականացմանթույլտվությանվճարներայդթվում՝ | 7145 | 269 000,00 | 269 000,00 | X |
| 1132 | ա) Համայնքիտարածքումնորշենքերի, շինությունների (ներառյալոչհիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվությանհամար (տող 1133 + տող 1334), որից՝ | | 269 000,00 | 269 000,00 | X |
| 1133 | աա) Հիմնականշինություններիհամար | | 269 000,00 | 269 000,00 | X |
| 1250 | 2.5 Ընթացիկներքինպաշտոնականդրամաշնորհներ՝ ստացվածկառավարմանայլմակարդակներից (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող | 7331 | -5 858 000,00 | -5 858 000,00 | X |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 1258) որից՝ | | | | |
| 1254 | բ) Պետականբյուջեիցփրամադրվողայլդոփացի աներ (փող 1255 + փող 1256) այդթվում՝ | | -5 858 000,00 | -5 858 000,00 | X |
| 1256 | բբ) Պետականբյուջեիցհամայնքիվարչականբյուջ եինփրամադրվողայլդոփացիաներ | | -5 170 700,00 | -5 170 700,00 | X |
| 1257 | գ) Պետականբյուջեիցփրամադրվողնպատակայ ինհափկացումներ (սուբվենցիաներ) | | -687 300,00 | -687 300,00 | X |
| 1300 | 3. ԱՅԼԵԿԱՄՈՒՏՆԵՐ (փող 1310 + փող 1320 + փող 1330 + փող 1340 + փող 1350 + փող 1360 + փող 1370 + փող 1380 + փող 1390) այդթվում՝ | 7400 | 1 629 000,00 | 1 629 000,00 | 0,00 |
| 1330 | 3.3 Գույքիվարձակալությունիցեկամուփներ (փող 1331 + փող 1332 + փող 1333 + փող 1334) այդթվում՝ | 7415 | -3 473 783,00 | -3 473 783,00 | X |
| 1331 | Համայնքիսեփականությունհամարվողհողեր իվարձակալությանվարձավճարներ | | -3 473 783,00 | -3 473 783,00 | X |
| 1340 | 3.4 Համայնքիբյուջեիեկամուտներապրանքներիմ ատակարարումիցևծառայություններիմափուց ումից (փող 1341 + փող 1342+ փող 1343) այդթվում՝ | 7421 | 4 200 000,00 | 4 200 000,00 | X |
| 1343 | Օրենքովսահմանվածդեպքերումհամայնքայի նհիմնարկներիկողմիցառանցփեղականփուր քիգանձմանմափուցվողծառայություններիկա մկափարվողգործողություններիհիմացփաց վող (գանձվող) այլվճարներ | | 4 200 000,00 | 4 200 000,00 | X |
| 1350 | 3.5 Վարչականգանձումներ (փող 1351 + փող 1352) այդթվում՝ | 7422 | 221 600,00 | 221 600,00 | X |
| 1351 | Տեղականվճարներ | | 221 600,00 | 221 600,00 | X |
| 1390 | 3.9 Այլեկամուփներ (փող 1391 + փող 1392 + փող 1393) այդթվում՝ | 7452 | 681 183,00 | 681 183,00 | 0,00 |
| 1393 | Օրենքովկիրավականայլակփերովսահմանվ ած՝ համայնքիբյուջեիմուփքագրմաննենթակայլե կամուփներ | | 681 183,00 | 681 183,00 | 0,00 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՁԱՔԱՐՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27 դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝ | 12109.0 | 12109.0 | 0,0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝ | 12109.0 | 12109.0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 12109.0 | 12109.0 | 0,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**հազ.դրամ**

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4530 | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող 4531 + տող 4532 + տող 4533), որից՝ | x | 18300.0 | 18300.0 | x |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 18300.0 | 18300.0 | x |
| 4634 | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 600.0 | 600.0 | x |
| 4770 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 4771 + տող 4771Ա), որից՝ | x | -18900.0 | -18900.0 | 0,0 |
| 4771 | - Պահուստային միջոցներ (վարչական բյ.) | 4891 | -18900.0 | -18900.0 | x |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N4
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27 դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ազ.դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝ | | 0 | 0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | 0 | 0 | 0,0 |
| | | | | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 18300.0 | 18300 | 0,0 |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 600.0 | 600.0 | 0,0 |
| | | | | - Պահուստային միջոցներ (վարչական բյ.) | 4891 | -18900.0 | -18900 | 0,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N5
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27 դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀՀ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝ | -7400,0 | -7400,0 | 0,0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝ | -7400,0 | -7400,0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -7400,0 | -7400,0 | 0,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N6
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀՀ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4770 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 4771 + տող 4771Ա), որից՝ | x | -7400,0 | -7400,0 | 0,0 |
| 4771 | - Պահուստային միջոցներ (վարչական բյ.) | 4891 | -7400,0 | -7400,0 | x |
| 4771Ա | - Պահուստային միջոցներ (ֆոնդային բյ.) | 4891 | 0,0 | x | 0,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N7
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀՀ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

*։զ.դրամ*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| **3110** | **11** | **1** | **0** | **ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝** | | **-7400.0** | **-7400.0** | **0,0** |
| **3112** | **11** | **1** | **2** | **ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ** | | **-7400.0** | **-7400.0** | **0,0** |
| | | | | **- Պահուստային միջոցներ (վարչական բյ.)** | **4891** | **-7400.0** | **-7400.0** | **0,0** |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

Հավելված N8
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27 դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝ | -4709,0 | -4709,0 | 0,0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝ | -4709,0 | -4709,0 | 0,0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -4709,0 | -4709,0 | 0,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N9
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27 դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ թվում՝ | x | -4709.0 | -4709.0 | x |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112 + տող 4114) որից՝ | x | -4709.0 | -4709.0 | x |
| 4111 | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | -4709.0 | -4709.0 | x |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N10
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի 27 դեկտեմբերի N60-Ն որոշման
ՀԱՎԵԼՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հ.դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 3110 | 11 | 1 | 0 | **ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝** | | -4709.0 | -4709.0 | 0,0 |
| | | | | - Պահուստային միջոցներ (վարչական բյ.) | 4891 | -4709.0 | -4709.0 | 0,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*27 դեկտեմբերի 2016 թվական N61 –Ն*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին*

*որոշում է՝*

*1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեն՝*
*1) եկամուտների գծով՝ 582566,3 հազար դրամ /հինգ հարյուր ութսուներկու միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ,*
*2) ծախսերի գծով՝ 643099,3 հազար դրամ /վեց հարյուր քառասուներեք միլիոն իննսունինը հազար երեք հարյուր / ՀՀ դրամ,*
*3) դեֆիցիտ՝ 60533,0 հազար դրամ / վաթսուն միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար/ ՀՀ դրամ:*
*2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները՝ ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավված 1- ի:*
*3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավված 2-ի:*
*4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավված 3-ի:*
*5.Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասորդը)՝ համաձայն հավված 4-ի:*
*6.Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասորդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հավված 5-ի :*
*7.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավված 6-ի:*
*8.«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝*
*1)թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,*

2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15% -ը:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՍ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 27

ք. Մեղրի